ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐՈՅԱՆ ԱՐՄԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ԵՐՎԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Թ. 00. 05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

САРОЯН АРМАН ВОЛОДЯЕВИЧ

РЕЛИГИОВЕДЧЕСКАЯ КОНЦЕПЦИЯ АРХИМАНДРИДА ЕРВАНДА ТЕР-МИНАСЯНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 9. 00. 05 "Теория и история религии (исторические науки)"

ЕРЕВАН - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ***Լ. Ա. Սարգսյան***

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ***Է. Գ. Մինասյան***

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ ***Ա. Հ. Հարությունյան***

Առաջատար կազմակերպություն Խաչատուր Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. մարտի 9 ժ. 14:00-ին ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի 068 մասնագիտական խորհրդի նիստում (Հասցե՝ ք. Երևան 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի «Աճեմյան գրադարանե կաբինետում):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2017 թ. փետրվարի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Յ.ԲԱԼՅԱՆ**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: доктор исторических наук, профессор ***Л. А. Саркисян***

Оффициальные оппоненты: доктор исторических наук, профессор ***Э. Г. Минасян***

кандидат исторических наук, доцент ***А. А. Арутюнян***

Ведущая организация: Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна

Защита состоится 9-ого марта 2017г., в 14:00 на заседании специализированного совета 068 ВАК РА в Ереванском государственном университете (Адресс: г. Ереван 0025, Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус, кабинет ՀՀБиблиотека АчемянՄՆ).
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 9-ого февраля 2017г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент **А. Ю. БАЛЯН**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայաստանում 20-րդ դ. վերջին քառորդում տեղի ունեցած որակական տեղաշարժերը, երկրի հասարակական-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի արմատական փոփոխությունները, համաշխարհայնացման գործընթացներով թելադրված միասնացման ու բազմազանության շարունակ խորացող հակադրությունը և ուրվագծվող քաղաքակրթությունների բախման վտանգը համալիր խնդիրներ են առաջադրել տեսական մտքի, այդ թվում՝ հումանիտար գիտությունների առջև՝ առաջնային դարձնելով մղելով այդ փոփոխությունների գիտական իմաստավորման պահանջը:

Մյուս կողմից գիտելիքների գաղափարազերծումը, նախկինում ձևավորված կարծրատիպերի ու մոտեցումների անկողմնակալ վերարծարծումը հայեցակարգային լուծումներ են պահանջում անցման շրջանը բնութագրող ընդհանրական և մասնավոր իրողությունների, ներդրվող քաղաքակրթական ու հոգևոր-մշակութային նոր արժեքների գնահատման գործում: Այդ պարագայում արդիական հնչեղություն է ձեռք բերում հատկապես բազմաստիճան կապերի և հարաբերությունների ընդարձակ ոլորտ հանդիսացող հասարակության հոգևոր կյանքի համակարգային ուսումնասիրությունը, որի անբաժան տարրերից են կրոնը և եկեղեցին:

Արդիական կարևորություն է ձեռք բերում հատկապես մերօրյա արժեքային ըմբռնումների տեսանկյունից Հայ եկեղեցու պատմության և դերի առանցքային հիմնահարցերի քննարկումը, ինչն արդիական է նաև այնու, որ հայագիտության շրջանակներում համարժեք աշխատությունները դեռևս բավարար թիվ չեն կազմում, իսկ առկա երկասիրություններում դեռևս գերիշխում են բևեռացված գնահատականները:

Ատենախոսության արդիականությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ արդի կրոնագիտության, աստվածաբանական և եկեղեցագիտական մեթոդաբանության հիման վրա առաջին անգամ վերլուծության է ենթարկվում հիմնահարցերի մի խումբ, որը հանիրավի մոռացության էր տրվել հայ կրոնագիտական մտքի շրջանակներում:

Ատենախոսության արդիականությունը թելադրված է նաև Հայ եկեղեցու պատմության կարևորագույն ժամանակահատվածներից մեկի պատմաքննական վերլուծության անհրաժեշտությամբ և միտված է վերագնահատել ու վերլուծական գրականության մեջ մինչ օրս շրջանառվող հատվածական, կանխակալ, երբեմն էլ ոչնչով չհիմնավորված կամայական տեսակետներն ու մոտեցումները:

Աշխատանքը հնարավորություն է տալիս Հայոց եկեղեցու պատմությունը քննակել ընդհանուրի, մասնավորի, ավանդականի և արդիականի համատեքստում, ինչը կարող է էապես նպաստել նաև եկեղեցու, մշակույթի և հասարակական բազմաստիճան կապերի ու հարաբերությունների օբյեկտիվ ուսումնասիրությանը:

Արդիական կարևորություն ունի նաև Հայ եկեղեցու կյանքում տեղ գտած ներքին խմորումների հոգևոր և գաղափարական հենքի բացահայտումը, քանի որ աշ-

խատանքը նպաստում է եկեղեցական կառույցի՝ որպես ազգային միասնականության նպաստող առանցքային գործոններից մեկի համակարգված ուսումնասիրությանը:

Արդիական հնչեղությունը դրսևորվում է նաև նրանում, որ Հայ եկեղեցու պատմության ցանկացած ժամանակահատվածի գիտատեսական ուսումնասիրություն կարևորվում է ինչպես ազգ-եկեղեցի փոխարաբերության, այնպես էլ՝ եկեղեցու ազգապահպան, ազգահավաք և միավորիչ գործառույթների ուսումնասիրության տեսանկյունից: Իսկ վերջինս հույժ կարևոր է այն մարտահրավերների համապատկերում, որոնք այսօր ուղղված են Հայ եկեղեցուն՝ Հայաստանում աղանդավորության տարածման և արմատավորման տեսքով:

Գրականության տեսություն: Հայագիտության շրջանակներում Ե. Տեր-Մինասյանի հոգևոր գործունեության, ինչպես նաև աստվածաբանական ժառանգության ամբողջական գիտական ուսումնասիրություն դեռևս չի կատարվել: Հրապարակում առկա են միայն վաստակաշատ հայագետի աստվածաբանական ժառանգության, եկեղեցագիտական և տեսական ըմբռնումների առանձին կողմերի արժևորմանը նվիրված ընդհանրական, հատվածական, երբեմն՝ միակողմանի հոդվածներ և գրախոսություններ, որոնք ստորաբաժանվում են երեք մասի՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային:

Նախախորհրդային շրջանի որոշ հրապարակումներում Տեր-Մինասյանի աստվածաբանական ժառանգությանն անդրադարձ է կատարվել նկարագրական բնույթի գրախոսություններով: Բևեռացած, հատվածական ու սուբյեկտիվ են նաև Երվանդ վարդապետի դավանական և եկեղեցագիտական ժառանգության, ինպես նաև նրա կողմից առաջադրված Հայ եկեղեցու բարեկարգության ծրագրին վերաբերող հոդվածները և հրապարակումները: Սակայն դրանցում որպես կանոն բացակայում են օբյեկտիվ քննական մոտեցումները և սահմանափակված են Երվանդ վարդապետի կողմից առաջադրված բարեկարգության ծրագրի պաշտպանությամբ կամ մերժմամբ:

Միակողմանի են նաև Տեր-Մինասյանի հոգևոր և տեսական ժառանգությանը նվիրված խորհրդային շրջանի հրապարակումները: Ինքնին հասկանալի պատճառներով այս փուլում վերլուծաբանները կամ լիովին անտեսել են ճանաչված հայագետի աստվածաբանական ժառանգության ուսումնասիրությունն ու արժևորումը, կամ էլ դրանց անդրադարձել են հպանցիկ՝ պատմա-բանասիրական առանձին հիմնահարցերի պրիզմայով, ուր հիմնականում գնահատվել են նրա գիտական ձեռքբերումները և մանկավարժական գործունեությունը:

Ա. Սրապյանի կազմած կենսամատենագիտությունը նույնպես ամբողջական չէ, քանի որ նրանում տեղ չեն գտել հեղինակի աստվածաբանական, եկեղեցագիտական և հայագիտական բոլոր աշխատանքները: Այս փուլի արտասահմանյան հրատարակություններից արժանահիշատակ է Գյուտ եպիսկոպոս Ղազարյանի աշխատանքը, որտեղ հեղինակը անդրադարձել է միայն Տեր-Մինասյանի կողմից առաջադրված սոցիալական ավետարանի տեսության արժևորմանը:

Հետխորհրդային վերլուծաբանները հիմնականում սահմանափակվել են վաստակաշատ հայագետի կենսամատենագիտության վերլուծությամբ, կամ քննարկել են միայն նրա բարենորոգչական հայացքները: Նույնը պետք է ասել նաև այն մենագրությունների վերաբերյալ, որոնցում հատվածաբար քննարկվել են Տեր-Մինասյանի բարենորոգչական հայացքները:

Տեր-Մինասյանի եկեղեցական գործունեությունը և լիբերալ բողոքական դպրոցի հետ ունեցած առնչությունները» թեկնածուական ատենախոսությունը առաջինն է հայագիտության մեջ, որում կրոնագիտության, պատմա-համեմատական աստվածաբանության և եկեղեցագիտության դիրքերից համակարգային վերլուծության է ենթարկվել հեղինակի աստվածաբանական ժառանգությունը և վերջինիս նկատմամբ Հայ եկեղեցու և տեսական մտքի ներկայացուցիչների դիրքորոշումները£

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Հանդես գալով հավատքային հիմնարար սկզբունքների բարդ ու բազմադեմ հոսանքների ամբողջության տեսքով՝ ինչպես ցանկացած, այնպես էլ Երվանդ Տեր-Մինասյանի աստվածաբանական ժառանգության ուսումնասիրությունը պահանջում է խորքային վերլուծական քայլերի հաջորդականություն:

Ատենախոսության մեջ քննարկվող հիմնահարցերն առնչվում են Հայոց եկեղեցու դավանական ըմբռնումների հետ: Իսկ դրանց հոգևոր և աշխարհայացքային հիմքերի բացահայտումը և արժևորումը պահանջում է կրոնագիտական, աստվածաբանական և եկեղեցագիտական համակարգված ուսումնասիրություն:

Ատենախոսության հիմնական նպատակն է համապարփակ և մանրամասն քննության ենթարկել Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի հոգևոր գործունեությունը, աստվածաբանական ու եկեղեցագիտական ժառանգությունը և ներկայացնել իրենց բնութագրիչների ու առանձնահատկությունների ամբողջությամբ: Եվ քանի ուսումնասիրվող նյութը նաև պատմական զարգացման արդյունք է, ապա դրա վերլուծությունը և արժևորումն անհրաժեշտաբար ենթադրում է տեսական և մեթոդաբանական ընդհանրական սկզբունքների կիրառում: Հաշվի առնելով այդ ամենը և հիմք ունենալով կրոնագիտության, աստվածաբանության և եկեղեցագիտության տեսական ու մեթոդաբանական հիմնարար սկզբունքները՝ ատենախոսության մեջ առաջադրվել են վերլուծական հետևյալ խնդիրները.

♦ համակողմանի վերլուծել Երվանդ վարդապետի աշխարհայացքի ձևավորման հիմքերը, համակարգային մոտեցմամբ լուսաբանել նրա աշխարհընկալման վրա հայ և եվրոպական մտածողների ազդեցության եղանակները, դրանց դրսևորումները բնութագրող օրինաչափությունները,

♦ կրոնական մտածողության և աշխարհընկալման միտումների համեմատական կրոնագիտական, աստվածաբանական և եկեղեցագիտական վերլուծությամբ համակարգված ուսումնասիրել Երվանդ Տեր-Մինասյանի հոգևոր գործունեության առանձնահատկությունները և ուղղվածությունը,

♦ տեսական, պատմական և համեմատական մեթոդաբանության դիրքերից քննական արժևորման ենթարկել քրիստոնեություն-մշակույթ փոխհարաբերության

Երվանդ վարդապետի աստվածաբանական ըմբռնումները, բացահայտել և լուսաբանել վերջինիս հավատքային ուղղվածությունը,

♦ կրոնագիտության, պատմական աստվածաբանության և եկեղեցագիտության դիրքերից բացահայտել դավանանքը վերանայելու և նոր քրիստոնեական աշխարհայացք ձևավորելու Երվանդ վարդապետի բարենորոգչական աստվածաբանության հիմքերը և ուղղվածությունը,

♦ ընդհանուրի և մասնավորի դիրքերից անկողմնակալ և ամբողջական վերլուծել սոցիալական Ավետարանի Երվանդ վարդապետի ըմբռնումները, բացահայտել վերջինիս հոգևոր և փիլիսոփայական ակունքները, գնահատել այդ վարդապետության հոգևոր ուղղվածությունը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսությունը շարադրվել է գիտության արդի սկզբունքների համապատասխանությամբ՝ հիմք ընդունելով փաստական նյութի, սկզբնաղբյուրների և դրանց մասնագիտական ուսումնասիրությունների վերլուծության, համադրության և ընդհանրացման տեսական, պատմական, համեմատական կրոնագիտության, պատմաաստվածաբանական և եկեղեցագիտական մեթոդաբանությունը:

Տեր-Մինասյանի աստվածաբանական աշխարհայացքի ձևավորման գործում ազգային և եվրոպական աստվածաբանական համակարգերի ազդեցության քննական վերլուծության և արժևորման գործում առաջնորդվել ենք կրոնագիտական համակարգային, կառուցվածքագործառնական, ինչպես նաև տեսական, պատմական և համեմատական աստվածաբանության մեթոդաբանությամբ: Քրիստոնեություն-մշակույթ, քրիստոնեություն-ընկերային միջավայր հայեցակարգի ձևավորման օրինաչափությունների վերլուծության ու արժևորման գործում՝ նաև կրոնագիտական, աստվածաբանական և պատմահամեմատական մեթոդաբանությամբ: Իսկ Տեր-Մինասյանի դավանական ընբռնումների՝ քրիստոնեական նոր աշխարհայացքի ձևավորման և սոցիալական Ավետարանի վարդապետության քննական արժևորման, ինչպես նաև դրանցում տեղ գտած աստվածաբանական-դավանական ազդեցությունների համակողմանի և ամբողջական ուսումնասիրության պարագային առաջնային են համարվել տեսական, պատմական և համեմատական կրոնագիտության, աստվածաբանության, ինչպես նաև եկեղեցագիտական մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի եկեղեցական գործունեության, աստվածաբանական ժառանգության և լիբերալ-բողոքական դպրոցի հետ ունեցած առնչությունների՝ առաջին անգամ իրականացվող ամբողջական և համակարգված վերլուծությունն է: Ատենախոսության գիտական նորույթի տարրերից պետք է համարել այն, որ.

► ամբողջի և մասի փոխհարաբերության կրոնագիտական և աստվածաբանական ըմբռնումների դիրքերից առաջին անգամ համակարգված վերլուծության են ենթարկվել Տեր-Մինասյանի կրոնական աշխարհընկալման հիմքերը: Ցույց է տրվել Հայ եկեղեցու դավանական ըմբռնումների և եվրոպական աստվածաբանական հայեցակարգերի դերը այդ գործընթացում,

► տեսական, պատմահամեմատական կրոնագիտության, եկեղեցագիտության և աստվածաբանության դիրքերից առաջին անգամ ընդհանրացված ձևով արժևորվել են Տեր-Մինասյանի հոգևոր գործունեության հիմքերը և շարառիթները: Բացահայտվել և համակարգված գնահատվել են նշված գործունեության փուլային զարգացման միտումները, ինչպես նաև բովանդակային ուղղվածությունն ու աշխարհայացքային առանձնահատկությունները,

► կրոնագիտության, աստվածաբանության և եկեղեցագիտության հիմնարար սկզբունքների դիրքերից բացահայտվել և գնահատվել են քրիստոնեություն-մշակույթ և քրիստոնեություն-ընկերային միջավայր փոխառնչությունների վերաբերյալ Երվանդ վարդապետի աստվածաբանական լուծումների առանձնահատկությունները: Հիմնավորվել է, որ այդ լուծումները կառուցվել են ավանդական և արդի լուծումների զուգադրությամբ և բազմաթիվ թելերով կապված են եղել ժամանակի լիբերալ-բողոքական հայացքների հետ,

► կրոնագիտության և աստվածաբանական հիմնարար սկզբունքների դիրքերից առաջին անգամ հիմնավորվել և գիտական շրջանառության մեջ է դրվել այն տեսակետը, որ «Աստծու որդիներ լինելու» և «ընդհանուր եղբայրության» մասին հայեցակարգով Երվանդ վարդապետը Հայ եկեղեցու աշխարհընկալմանը հակադրել է դավանանքի և աստվածաշնչագիտության պատմաքննականության սկզբունքը: Համեմատական վերլուծությամբ ցույց է տրվել նաև այդ հայեցակարգի հակադրությունը եկեղեցական ավանդական մեկնաբանությանը,

► առաջին անգամ ամբողջության մեջ ներկայացվել է «նոր քրիստոնեական աշխարհայացք» ձևավորելու Տեր-Մինասյանի աստվածաբանական ուսմունքի կրոնագիտական, աստվածաբանական ու եկեղեցագիտական գնահատականը, բացահայտվել և հիմնավորվել են Հայ եկեղեցու հոգևոր արժեհամակարգի նկատմամբ դրա սկզբունքային անհամատեղելիությունը: Անկողմնակալ կերպով գնահատվել է նաև «նոր քրիստոնեական աշխարհայացք» ձևավորելու արտաքին հիմքերը,

► փաստական նյութի կրոնագիտական վերլուծությամբ առաջին անգամ ուրվագծվել են Երվանդ վարդապետի առաջադրած «սոցիալական Ավետարանի» վարդապետության մետաֆիզիկական սահմանները, ցույց են տրվել քրիստոնեական դավանանքի, եկեղեցու և աստվածաշնչական պատմության նկատմամբ այդ հայեցակարգի ուղերձները:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Հայ Եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի կողմից: Ատենախոսության առանցքային գաղափարներն ու հիմնադրույթները հրատարակված են 1 մենագրության, «Էջմիածին» գիտական ամսագրում լույս ընծայված 3 հոդվածներում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսությունն ունի կիրառական և գործնական մեծ նշանակություն: Նյութի շրջանակներում քննարկվող հիմնախնդիրներն առնչվում են մերօրյա՝ արագ փոփոխվող աշխարհակարգի տար-

բեր ազդեցություններին ենթարկվող հայ ժողովրդի ազգային- հոգևոր նկարագրի, ինքնության և հոգեկերտվածքի հիմնահարցերի հետ:

Ատենախոսության վերլուծական ընդհանրացումները կարող են նպաստը բերել եկեղեցու հասարակական դերի ծայրահեղություններից զերծ և անաչառ արժևորման գործին:

Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել Հայ եկեղեցու պատմության, ինչպես նաև տեսական, պատմական կրոնագիտության և աստվածաբանության համապատասխան հիմնահարցերի ուսումնասիրության և արժեքային մոտեցումներ մշակելու գործում:

Վերլուծական աշխատանքի շրջանակներում ձեռք բերված եզրահանգումները և ընդհանրացումները կօգտագործվեն բուհական կրթահամակարգի հետևյալ բաժիններում՝

- ընդհանուր կրթական «Կրոնների պատմություն» դասընթացի «Հայ եկեղեցին 20-րդ դարում» թեմատիկ նյութերի շրջանակներում,
- ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի և Գևորգյան հոգևոր ճեմարանի բակալավրիատի ընդհանուր մասնագիտական «Եկեղեցու պատմություն» դասընթացի «Բողոքական եկեղեցագիտությունը» և «19-րդ դ. լիբերալ-բողոքական աստվածաբանությունը» թեմատիկ նյութերի շրջանակներում,
- ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի և Գևորգյան հոգևոր ճեմարանի բակալավրիատի «Հայ եկեղեցու պատմություն» ընդհանուր մասնագիտական դասընթացի «Հայ եկեղեցու բարեկարգության հիմնահարցը 20-րդ դ. առաջին տասնամյակներին» և «20-րդ դ. առաջին տասնամյակների դավանական վիճաբանությունները» թեմատիկ նյութերի շրջանակներում,
- ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի և Գևորգյան հոգևոր ճեմարանի մագիստրատուրայում՝ «Հայ եկեղեցու դավանանքը» և «Դավանանքի (դոգմաների) պատմություն» դասընթացների համապատասխան թեմատիկ նյութերի շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է՝ ներածությունից, երկու գլխից (յուրաքանչյուրը 3-ական ենթագլուխներով), վերջաբանից, սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտվող նյութի գիտական հրատապությունն ու արդիականությունը, բացահայտվում են հիմնահարցի տեսական ուսումնասիրության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները, գիտական նորույթը, ինչպես նաև կիրառական նշանակությունը:

Առաջին գլխում («Երվանդ Տեր-Մինասյանի աշխարհայացքի ձևավորումը և հոգևոր գործունեության վաղ փուլը») անդրադարձ է կատարվել հոգևոր, հասարա-

կական ու մշակութային այն միջավայրին, որի ազդեցությամբ ձևավորվել է Երվանդ վարդապետի աշխարհայացքը:

Առաջին ենթագլուխը («Երվանդ Տեր-Մինասյանը և նրա դարաշրջանը») հիմնականում մտված է Երվանդ Տեր-Մինասյանի կենսագրության և դիտարկվող ժամանակաշրջանի վերլուծությանը:

Երվանդ Տեր-Մինասյանը ծնվել է 1879թ.: Տարրական կրթությունն ստացել է Հառիճավանքի դպրոցում: 1892թ. ընդունվել է Գևորգյան ճեմարան, 1900թ. առաջին կարգի «Յոյժ գովելի» վկայականով ավարտել է հաստատության մասնագիտական լրիվ դասընթացը և պաշտպանության է ներկայացրել «Հաղբատ և Սանահին վանքերը և նրանց նշանակութիւնը Հայոց պատմութեան մէջ» ավարտաճառը: Նույն թվականին ուսման մեջ խորանալու համար նա մեկնել է Անգլիա: Սակայն դրամական խնդիրներից դրդված ուսումը շարունակել է Գերմանիայում: 1901թ. ապրիլին Երվանդ սարկավագն ընդունվել է Լայպցիգի համալսարան, որտեղ ուսանել է հինգ կիսամյակ: Ապա դոկտորական քննության իրավունք ձեռք բերելու համար տեղափոխվել է Բեռլինի համալսարան: Այդ շրջանում նա գործակցել է նաև «Արարատ» ամսագրին: Ուսման ավարտին փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան ստանալու համար Երվանդ սարկավագը Բեռլինի համալսարանում ատենախոսության նյութ է ընտրել «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց Եկեղեցիների հետ հայկական և ասորական աղբիւրների համաձայն» թեման, և 1904թ. ապրիլին աշխատանքը ներկայացվել է Լայպցիգի համալսարան: Իր ուսուցիչ հռչակավոր աստվածաբան Ա. Հառնակի միջնորդությամբ ատենախոսության առաջին մասը տպագրվել է "Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur" հայտնի ժողովածուի մեջ, որից հետո նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: Միաժամանակ, աստվածաբանության լիցենցիատի աստիճան ստանալու համար նա հրատարակված աշխատանքը ներկայացրել է Գիսենի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետ, ուր, հաշվի առնելով աշխատության վերաբերյալ գիտական հասարակայնության հնչեցրած բարձր կարծիքները, որոշվել է առանց աշխատանքը պաշտպանելու Երվանդ սարկավագին շնորհել աստվածաբանության լիցենցիատի աստիճան:

Տեր-Մինասյանը 1904թ. վերադարձել է հայրենիք, ձեռնադրվել կուսակրոն քահանա և դասախոսական աշխատանքի անցել Գևորգյան հոգևոր ճեմարանում: Այստեղ նա դասավանդմանը զուգընթաց մեծ հաջողությամբ իրականացրել է նաև ճեմարանի համար դասագրքեր պատրաստելու պատասխանատու գործը: Հայերենով 1908թ. լույս է ընծայել դոկտորական ատենախոսությունը, որին նախորդել են քննարկվող հիմնահարցերը լուսաբանող մի շարք հոդվածներ: Մասնագիտական պատրաստվածությունը վարդապետին թույլ է տվել զբաղվել նաև աստվածաբանական, պատմաբանասիրական և աղբյուրագիտական ուսումնասիրություններով: Նա ստանձնել է նաև Մայր Աթոռի տպարանի կառավարչի պաշտոնը և միաժամանակ վարել «Արարատի» խմբագրի օգնականի պարտականությունները:

Տեր-Մինասյանը մանկավարժական գործունեություն է ծավալել Ալեքսանդրա-

պոլում: 1918թ. ընտրվել է Թբիլիսիի Հայոց ազգային խորհրդի անդամ և մեկ տարի ղեկավարել է կառույցի ուսումնական մասը: 1920թ. վերջերին պաշտոնավարել է որպես Հայաստանի համալսարանի պրոֆեսոր:

1930թ. նա աշխատել է Երևանի մանկավարժական տեխնիկումի, ապա՝ Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի գերմաներենի դասախոս, իսկ 1932-1947թթ.՝ լեզուների ամբիոնի վարիչ:

Հաշվի առնելով հայագիտության մեջ նրա ունեցած անուրանալի ներդրումը, 1943թ. ակադեմիկոսներ Հ. Օրբելու և Մ. Աբեղյանի առաջարկով ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի Լեզվի և գրականության ինստիտուտը որոշել է առանց ատենախոսություն պաշտպանելու Ե. Տեր-Մինասյանին շնորհել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, որը 1944թ. վավերացվել է Կառավարության կողմից: 1943 թ. նա արդեն Երևանի պետական համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչն էր և գերմաներենի պրոֆեսոր: Այստեղ էլ վավերագրվում է նրա շուրջ 40-ամյա մանկավարժական պատկառելի վաստակը և 1946թ. նրան շնորհում է պրոֆեսորի կոչում: Արդեն բավականին առաջացյալ տարիքում նա աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում նախ որպես բառարանագրության բաժնի ավագ գիտաշխատող, իսկ 1955-1970թթ.՝ բաժնի վարիչ: Մանկավարժական և գիտահետազոտական բեղուն գործունեությանը զուգընթաց Ե. Տեր-Մինասյանը թարգմանական (47 անուն) և խմբագրական (ավելի քան 15) լուրջ աշխատանք է ծավալել նաև ՀՍՍՀ պետհրատում: Նա արգասավոր աշխատանք է տարել նաև ավելի քան 135 անուն բառարանների կազմության և խմբագրության ուղղությամբ:

Երկրորդ ենթագլխում («Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի աստվածաբանական աշխարհայացքի ձևավորումը և առնչությունները լիբերալ-բողոքական դպրոցի հետ») անդրադարձ է կատարվել վարդապետի աշխարհայացքի ձևավորման գործում լիբերալ-բողոքական աստվածաբանության դերին:

Լինելով 19-րդ դ. քրիստոնեական մտածողության ընդերքում ձևավորված ազդեցիկ շարժումներից մեկը՝ լիբերալ-բողոքականությունը «ռացիոնալիզմի լույսով և պատմական գնահատումով» լուսավորեց դոգմաների պատմության «մութ անկյունները»: Այն իր առաջնային խնդիրներից է համարել կամրջել քրիստոնեական հավատի ու արդի գիտելիքի միջև եղած անդունդը և որոշակի «ազատություն է պահանջել» սուրբգրային մեկնությունների ավանդական եղանակների ու դոգմատիկայի նկատմամբ ազատ վերաբերմունք ցուցաբերելու համար: Այդ դիրքերից շարժումը հավատքը խարսխել է մարդկային փորձառության վրա, մեկնաբանել այն ձևերով, որոնք հարիր էին արդի աշխարհայացքին, և պնդել, որ պատմականորեն կրոնն ու մշակույթը նույնանում են: Սակայն լիբերալ բողոքականները տարբեր կերպ են մեկնաբանել հավատքայինի և բանականի աստվածաբանական լուծումները: Ավետարանը նրանք բառացի չեն հանգեցրել մշակույթին և նման մոտեցումը համարել են «մտավոր կարճատեսություն»: Ավետարանը համարելով մշակույթի յուրատիպ «մարմնացում» (Kulturprotestantismus)՝ նրանք այդուհանդերձ պնդել են, որ կրոնը

պետք է հարմարվի մշակութային փոփոխություններին:

Փաստական նյութի վերլուծությամբ հիմնավորվում է, որ լիբերալ-բողոքական աստվածաբանության վերոնշյալ սկզբունքները միջնորդավորված կերպով իրենց կնիքն են դրել նաև Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի աստվածաբանական աշխարհայացքի վրա:

Ցույց է տրվում նաև, որ Հայ եկեղեցու ավանդական ըմբռնումների նկատմամբ նրա առաջարկները հրապարակ են նետվել բանավիճային իմաստով, որի գերնպատակն է եղել «Հայ եկեղեցին դարձնել ավելի արդիական, հասկանալի և ժողովրդին մոտ կանգնած»: Ի տարբերություն Ե. Տեր-Մինասյանի «ձախ» և «ծայրահեղ ձախ» քննադատների, փաստվում է, որ նրա կողմից առաջադրած որոշ ծայրահեղ հիմնադրույթներ չպետք է բացատրել միայն «բողոքականության ազդեցությամբ»:

Մատնանշվում է, որ վարդապետի հայեցակարգի ելակետն այն համոզմունքն է, թե քրիստոնեությունն ըմբռնելով ժամանակի մարտահրավերները և «իւրաքանչիւր նոր շարժման ու համամարդկային զարգացման աստիճանների արդիւնքները», դրանք բեղմնավոր է դարձրել եկեղեցական կյանքի համար՝ «նրանց օգտաւէտ եւ զորեղ կողմերը կրօնական աշխարհայեացքին յարմարեցնելով», որ քրիստոնեությունը «...ամէն կողմից դէպի նա սլացող մտքերն ու գաղափարներն իւր մէջ առաւ, նրանց քրիստոնէական գոյն տուեց»:

Լիբերալ բողոքականության ազդեցությամբ հայ վարդապետը պնդում է, որ «հեղինակութիւնը անյուսալի անցեալ է»: Նա պահանջում է նաև «երկխոսության և հարմարեցման այդ փորձառությունը» տեղափոխվել արդիականության ասպարեզ, քանի որ վստահ է, որ քրիստոնեությունը «...չի կարող հրաժարուել իւր քաղաքակրթական կրօն լինելու բնաւորութիւնից»:

Երրորդ ենթագլխում («Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի հոգևոր գործունեության առաջին շրջանը /1904-1907թ. կեսեր/ե) ներկայացված Մայր Աթոռի միաբանական կյանքը և 1905թ. ամռանը Տեր-Մինասյանի վարդապետական մասնավոր աստիճան շնորհելու հանգամանքները: Վարդապետի հոգևոր և գիտակրթական գործունեության շարժառիթները սերտորեն կապված են եղել դարաշրջանի եկեղեցական-հասարակական պահանջների, մասնավորապես՝ դպրոցական կրթության բարեփոխման անհրաժեշտության և նոր սերնդի քահանայության պատրաստման հարցերի հետ: Այդ ամենի տրամաբանական հանգուցալուծումը պետք է համարել 1906թ. Էջմիածնում ազգային-կենտրոնական ժողով հրավիրելու Խրիմյան Հայրիկի նախաձեռնությունը, որը, ցավոք, ցանկալի ընթացք չունեցավ և կրթական հարցերն այդպես էլ լուծում չստացան:

Բացասական դեր է կատարել նաև Մայր Աթոռի միաբանների չհամաձայնեցված գործունեությունը, որի հետևանքով 1902թ. ճեմարանի տեսչի պաշտոնից հրաժարվեց Կարապետ Տեր-Մկրտչյանը: 1906թ. նույնը կատարեց նաև Գարեգին վրդ. Հովսեփյանը, որին ընկերակցեցին նաև Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Հուսիկ վրդ. Զոհրաբյանը և Երվանդ վրդ. Տեր-Մինասյանը: Ու թեև Երվանդ վարդապետը

նոր ուստարում հրավիրվել է ճեմարանում դասավանդելու, սակայն «գաղափարական պատճառաբանությամբ» մերժել է հրավերը, իսկ դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ խնդիրը տեղափոխվել է նաև անձնական ոլորտ: Մասնագիտական գրականության մեջ այդ տարաձայնությունները բացատրում են Կենտրոնական ժողովի պատվերով ճեմարանի մանկավարժական խորհրդի կողմից կազմված բարեկարգության ծրագրի շուրջ Էջմիածնի միաբանության «պահպանողական» և «ազատամիտ» հորջորջվող հոսանքների պայքարով, որի հետևանքով այդ ժամանակ սուր և լարված իրավիճակ էր ստեղծվել նաև Գևորգյան ճեմարանում: Սակայն նոր վիճաբանության առիթ դարձավ այն, որ Երվանդ վարդապետն այդ ծրագիրը հրատարակեց «լրացուցիչ առաջարկների հետ», որոնք բավականին արմատական մոտեցումներ էին բովանդակում:

Գևորգյան ճեմարանում ուսման շրջանը բաղկացած էր երկու հիմնական՝ վեցամյա դասարանական և եռամյա լսարանական (մասնագիտական) բաժիններից: Ըստ այդմ կազմվել էին ճեմարանի երկու՝ դասարանական և մասնագիտական բաժինների մանկավարժական խորհուրդներ: Դասարանական բաժնի մանկավարժական խորհուրդն առաջարկում էր ձևավորել նոր՝ յոթերորդ դասարան, «...որպէսզի հնարաւոր լինի, ճեմարանի նպատակի համաձայն, հայոց դպրոցների համար ուսուցիչներ և Հայաստանեայց եկեղեցու համար սպասաւորներ պատրաստել»: Իսկ մասնագիտական բաժնի մանկավարժական խորհուրդն առաջարկում էր «ճեմարանը վերածել իսկական բարձրագոյն դպրոցի քառամեայ դասընթացքով և Աստուածաբանական ու հայագիտական երկու բաժանմունքներով»: Երվանդ վարդապետը կարծիք էր հայտնում նաև, որ ճիշտ կլինի ապագայում Սբ. Էջմիածնում պահել միայն «բարձրագոյն դպրոց՝ չորս ամեայ դասընթացով»: Ցույց է տրվում նաև, որ ճեմարանի բարեկարգության վարդապետի ծրագիրը թեև ուսումնական առումով բովանդակում էր դրական և հետաքրքիր առաջարկներ, այդուհանդերձ ենթադրում էր ինչպես դասավանդման, այնպես էլ՝ կառավարման՝ հնից բոլորովին տարբերվող համակարգ:

1907թ. հունիսի 2-ի Կոնդակով Խրիմյան Կաթողիկոսը իր տեղակալ Գևորգ. Սուրենյանցին լիազորել էր Սինոդի անդամների և Մայր Աթոռի միաբանների մասնակցությամբ ժողով հրավիրել՝ քննարկելու ճեմարանի և թեմական դպրոցների բարեկարգման ծրագրերը: Քննարկմանն է ներկայացվել նաև Մ. Աբեղյանի ծրագիրը, որը շատ հարցերում համահունչ էր վարդապետի կողմից հրատարակած ծրագրին: Ժողովն սկզբունքորեն ընդունել է ծրագրի բազմաթիվ առաջարկներ՝ բացառությամբ «ճեմարանի ուսումնական ու կառավարման վարչակարգի փոփոխման հարցի», ուստի Հայոց Հայրապետն այն վավերացրել է մասնակի:

Թեև 1906-1907թթ. ուստարում Երվանդ վարդապետն ուսուցչությամբ չի զբաղվել, սակայն արգասավոր գիտական գործունեություն է ծավալել: 1907թ. նա «Արարատում» հաջորդաբար հրատարակել է սոցիալական աստվածաբանության գերմանական դպրոցի հայտնի ներկայացուցիչ Ֆրիդրիխ Նաումանի քարոզները: Դրանով Երվանդ վարդապետն ու իր ընկերները հիմնավորում էին, որ աղքատախ-

նամությունը եկեղեցու սոցիալական ծառայության ձևերից է, կյանքը փոխելու ավետարանական քարոզի գործնական ձևակերպումը՝ *քրիստոնեական հասարակարգ կառուցելու առաջադրանքը:* Նա ձգտել է նաև համապատասխան ենթահող ձևավորել Հայոց եկեղեցում սոցիալական մշակույթի զարգացման համար, որը կօգներ եկեղեցուն ժամանակի ընկերային-տնտեսական խնդիրների վերաբերյալ դիրքորոշում ունենալ:

Երկրորդ գլուխը («Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի աստվածաբանական ըմբռնումները և բարենորոգչական ծրագիրը») աստվածաբանական ընկալումների համապատկերում հիմնականում վերաբերում է Հայոց եկեղեցու բարենորոգչական խնդիրներին:

Առաջին ենթագլխում («Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի հոգևոր գործունեության երկրորդ շրջանը /1907թ. երկրորդ կես-1910թ.ե/¤ տրվել է Տեր-Մինասյանի գործունեության երկրորդ փուլի ամբողջական վերլուծությունը:

Այս փուլի սկզբում Երվանդ վարդապետը նշանակվել է Էջմիածնի տպարանի վարիչ, ստանձնել է ճեմարանի դասախոսի պատասխանատու առաքելությունը և ձեռնամուխ եղել իր դասավանդած առարկաների դասագրքեր պատրաստելու աշխատանքին: 1908թ. նա ճեմարանի մասնագիտական բաժնի ուսանողների համար լույս է ընծայել «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» դասագրքի առաջին հատորը և պատրաստել է «Հին Յունական և միջնադարեան քրիստոնէական փիլիսոփայութեան համառօտ պատմութիւն» դասախոսությունների շարքը: Իսկ գիտական գործունեությունը նշանավորվել է քրիստոնեական կարևորորագույն հուշարձաններից մեկի՝ Տիմոթեոս Կուզի հակաքաղկեդոնական «Հակաճառութիւն» երկի հրատարակությամբ (Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանի հետ համատեղ): 1908թ. նրա հոգևոր գործունեության համար բեկումնային էր նաև լրամշակված դոկտորական ատենախոսության հրատարակությամբ: 1909թ. ժամանակի համեմատական կրոնագիտության դիրքերից Երվանդ վարդապետը հրատարակել է «Կրօնների պատմութիւն» դասագիրքը, որով ձգտել է Հայաստանում ձևավորել նաև գիտապես կրթված քրիստոնյա հասարակություն: Նույն թվականին պատմաքննաբանական մոտեցմամբ նա հրատարակել է նաև ուսումնական ձեռնարկի դեր կատարող աստվածաբանական մեկ այլ կարևոր աշխատություն՝ «Յիսուսի կեանքը և գործունէութիւնը», որին հաջորդել է կոթողային նշանակության մեկ այլ բնագրի՝ Իրինեոսի «Ընդդէմ հերձուածոց» աշխատության 4-5-րդ գրքերի լույսընծայումը (Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանի հետ համատեղ):

Վարդապետն հանդիպել է նաև որոշ արգելքների: Շարժառիթներից էին Գարեգին. Հովսեփյանի «Հայոց Հայրապետական Աթոռը» հոդվածի շուրջ բորբոքված կրքերը: Երվանդ վարդապետն, այդ հարցի վերաբերյալ իր մտահոգությունը *հանրության քննությանը ներկայացնելով,* հրապարակել է «Վերանորոգութեան կարիքը Հայոց եկեղեցու համար» հոդվածը: Նա վկայում է, որ վերջինս «մեծ համակրանքի է արժանացել, որևէ քննադատություն չի հնչել նրանում արծարծված հարցերի շուրջ,

իսկ եկեղեցական բարձրագույն իշխանությունը պաշտոնական որևէ դիրքորոշում չի արտահայտել»: Դրանից խրախուսված նա այդ խնդիրները քննարկել է մի նոր հոդվածում, սակայն այս անգամ մթնոլորտը կտրուկ «շիկացել է, և հանկարծական փոթորիկ է պայթել»: Կաթողիկոսական տեղապահ Գ. Սուրենյանցի կարգադրությամբ «Արարատի» ամսագրի էջերից կտրել-դուրս են հանել վարդապետի հոդվածը և այրել են տպարանի հրապարակում: Վարդապետը «խնդրի էությանը ծանոթացնելու» նպատակով հանդիպել է Մատթեոս Բ Հայրապետին և խնդրել «Հայոց Հայրապետի հեղինակավոր ձայնը լսելի դարձնել հոգևորականության և ժողովրդի առաջ»: Դատելով Մատթեոս Բ Կաթողիկոսի զգուշավոր գրառումներից պետք է պնդել, որ *նա անտես չի արել երիտասարդ վարդապետի բողոքը, սակայն լուծում ևս չի տվել*: Անպատասխան են մնացել նաև այս հարցում եկեղեցու ապագայով մտահոգ ազգային գործիչների միջնորդությունները: 1909թ. աշնանը Երվանդ վարդապետը հարկադրված հրաժարվել է տպարանի տեսչի պաշտոնից: Իսկ այն բանից հետո, երբ ճեմարանի նոր տեսուչ Ս. Տիգրանյանը նրան դուրս է թողել ուսուցչական կազմից, վարդապետի խոսքերով ասած «Այս և այլ հանգամանքներ ինձ սկսեցին տանել Էջմիածնից հեռանալու մտածումների ուղիով»: Նա հավաստում է, որ «Հակառակորդներս էլ զգալով այդ վիճակը՝ առաջարկ արին ինձ գնալ Քիշնեւ, Բեսարաբիայի թեմի առաջնորդի փոխանորդ եւ այնտեղի կոնսիստորիայի նախանդամի պաշտոնով»: Բայց նա մերժել է այդ առաջարկը:

Երկրորդ ենթագլուխը («Հայ եկեղեցու բարեկարգության Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի ծրագիրը») վերաբերում է եկեղեցու բարենորոգչությանն առնչվող հիմնախնդիրներին:

Այստեղ հիմնավորվում է, որ նրա կողմից հիշյալ ծրագիրն առաջադրվել է «քրիստոնէութեան ծանր հակասութիւնները» հաղթահարելու, «կրօնական պրոբլեմի ու հոգեւորականութեան դերի մասին ծայրայեղութիւնների հասած» անհասկացողությունը, ինչպես նաև «դաւանութեան, պաշտամունքի, ծիսակատարութեան եւ թէ առհասարակ քրիստոնէական սովորոյթի մէջ» տեղ գտած օտարումը հաղթահարելու պահանջով: Եվ քանի որ «Քրիստոնէական կեանքի չորս գլխաւոր կողմեր է համարել «աշխարհայեացք եւ դաւանանք, պաշտամունք, վարչական կազմակերպութիւն եւ սովորոյթ», այդ հաջորդականությունն էլ դարձել է նրա բարենորոգչական ծրագրի առանցքը:

Երվանդ վարդապետը թեև քրիստոնեական դավանանքի բարեփոխումների առաջարկը հիմնավորել և կապել է Սուրբ Գրքի հետ, բայց դա կատարել է ժամանակի մշակույթի հետ ունեցած երկխոսության համատեքստում: Նա առաջնային է համարել «աստվածային միևնույն ակունքից ծագող դաւանանքի և գիտության ներդաշնակեցումն» այն հիման վրա, որ «Կրօնն ինքն էլ մարդկային հոգու զարգացման մի արտադրութիւն է եւ նոյն ձեւով ենթակայ զարգացման, ինչպէս միւս երեւոյթները», հետևաբար՝ «... ոչինչ չի կարող ասել կամ ոչինչ չունի ասելու քրիստոնէութիւնը, որ հակառակ լինէր արդի գիտութեանը»:

Հայ եկեղեցու վերանորոգության անհրաժեշտությունը թելադրված է «եկեղե-

ցուց հետզհետե հեռացող և աստիճանաբար օտարացող տարրերին կրկին եկեղեցու գիրկը վերադարձնելու» և հավատացյալների «բարեպաշտական զգացումները չմեռցնելու» հրամայականով: Իսկ այդ գործընթացի հիմք է համարվել «պաշտամունքի և ծիսակատարութիւնների պատմականութիւնը», որի հետևանքով «արդի մարդու եւ քրիստոնեայի վրա» կորցրել է ազդեցությունը, վերածվել «անհետաքրքիր և ժամանակավրեպ երեւոյթի»: Պաշտամունքի բարեփոխման պատճառ է համարվում նաև «քրիստոնեական ոգու նվազում» որակվող և «ձևի մեջ կաղապարուած քարոզխօսքի» ազատականացման պահանջը: Երվանդ վարդապետի ընդհանրացնող հետևությունն այն է, որ պաշտամունքի առանցքը պետք է լինի ոչ թե ծես կատարելը, «այլ հաւատացեալներին Յիսուսի քարոզն ու վարդապետութիւնը ուսուցանելը եւ բարոյական, Աստուածահաճոյ կեանք առաջ բերելը»: Այդ դիրքերից է նա հավաստում նաև, որ «մեր եկեղեցական պաշտամունքը կարօտ է հիմնական վերանորոգութեան ու բարեփոխութեան», որի կարիքը «զգացւում է մեր ժողովրդի բոլոր խաւերի, առաւելապէս հենց իրենց՝ հոգեւորականների մէջ...»:

Անդրադառնալով «եկեղեցական վարչութեան» բարենորոգումների հիմնահարցին, Երվանդ վարդապետը գտնում է, որ «Այստեղ էլ, ինչպէս նախորդ խնդիրներում, ելք գտնել հնարաւոր է միայն պատմական զգացումն ըմբռնելով»: Կարևորելով եկեղեցու ոգուն հակադիր «անսխալական ավտորիտարիզմի» դրսևորումները հաղթահարելու հրատապությունը, նա հավաստում է նաև, որ «քրիստոնէական կրօնի մէջ իբրեւ առանձին դասակարգ, առանձին գործունէութեամբ հոգեւորականութիւն չպէտք է լինի» այն պարզ պատճառով, որ «իւրաքանչիւր ոք, ամէն առանձին անհատ նոյնքան մօտ է իւր Աստծուն, որքան միւսը եւ կարիք չունի Միջնորդի»:

Նույնքան արմատական են նաև եկեղեցական վարչության բարեփոխության Երվանդ վարդապետի մոտեցումները: Այս հարցում իդեալ է համարվում վաղ եկեղեցին, այնինչ, Ավետարանի ոգուն հակադիր ճանապարհով ձևավորվել է «միապետական եկեղեցին»: Եվ քանի որ համոզված է, որ «բացարձակ հեղինակութիւնների շրջանը անցել է վաղուց», իսկ «ընդհանուր եկեղեցական խնդիրները անհատները չեն կարող վճռել», պնդում է նաև, որ այս սկզբունքով պիտի վերանորոգուի մեր եկեղեցական քայքայուած կազմակերպութիւնը»: Այդ ամենով *Հայ Եկեղեցու բարենորոգության Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի ծրագիրը, իր իսկ խոսքերով ասած, առաջարկում էր առանց հապաղելու և առանց փափանվելու հիմքից ի վեր վերածնել և վերանորոգել Հայ եկեղեցին Հիսուսի Ավետարանի հիման վրա:*

Տպավորությունն այնպիսին է, որ «եկեղեցին բարենորոգելու» Երվանդ վարդապետի ցանկությունն անկեղծ է: Խնդիրը, սակայն, նրանում է, որ նրա արմատական մոտեցումները հանդիպում են ավանդական մտածողության կոշտ ընդդիմությանը: *Եվ արդյունքում կողմերը փորձում են մեկը մյուսից «փրկել քրիստոնեությունը»:*

Երրորդ ենթագլխում («Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի ուսմունքը «Նոր քրիստոնեական աշխարհայացքի» և «Սոցիալական Ավետարանի» մասին») նախ քննարկվում է «նոր քրիստոնեական աշխարհայացքի» մասին աստվածաբանական ըմբռնումը, որի գլխավոր պահանջն է եղել խորտակել արդի կեանքի համար ծանր

բեռ դարձած կրոնական հին կապանքները և այն փոխարինել «նորագոյն, ազատ ժամանակի անկախ մտածողությամբ: Փաստվում է նաև, որ Երվանդ վարդապետի աստվածաբանական հայեցակարգում «նոր քրիստոնեական աշխարհայացք» ձևավորելու հոգևոր հիմքը՝ *հավիտենական արժեք ունեցող ավետարանական ճշմարտությունն է:*

Համեմատական վերլուծությամբ հիմնավորվում է, որ «նոր քրիստոնեական աշխարհայացք» ձևավորելու վարդապետի տեսակետը կրում է Հառնակի ազդեցությունը որը նկատելի է հատկապես այն պնդման տեսքով, որ «երկրորդ գալստյան սպասումների» հետևանքով «քրիստոնէութիւնն ստիպուած զգաց իրեն յարմարելու աշխարհի պահանջներին եւ նրա բարիքների ու տուեալների նկատմամբ որոշ դիրք բռնելու»: Հայ աստվածաբանի համար աներկբա է, որ ամեն մի կրոն առնչվում է թե՛ անհատականության և նրա զգացմունքների, և թե՛ «համայնքային-կոլեկտիվ արժեքների» հետ: Բայց նա պնդում է, որ «հավերժական ճշմարտությունների» կարելի է հասնել միայն հավատի վրա խարսխված «ներքին մաքրությամբ»:

Հայտնի է, որ Ա. Հառնակը թեև արմատապես մերժել է «Ավետարանից կոնկրետ սոցիալական ծրագիր բխեցնելու» ամեն մի փորձ, ընդունելի է համարել, որ լինելով «հոգևոր միասնության վրա հենված սոցիալական իրականություն», Ավետարանի եզակի և բացառիկ տեսանկյուններից մեկը «Ավետարանական սիրո» վրա հենված սոցիալական (ընկերային) բնույթն է և որ «Այդ առումով ընդհանրապես անհնար է գերազանցել Ավետարանի սոցիալական քարոզը»: Ըստ էության համահունչ է նաև «Սոցիալական Ավետարանի» Տեր-Մինասյանի հայեցակարգը:

Վարդապետն Ավետարանը կենդանի իրականություն դարձնելու միակ ճանապարհ է համարում գործառնական հավատը, որը «դառնութեան ու վշտի հովիտը փոխարինում է Աստուծոյ ուրախ զուարթ որդիների երջանկութեան պարտէզի»: Եվ վստահ, որ «Այդպիսի վեհ եւ տիեզերական նպատակի համար անհատական ոյժերը բաւական չեն», նա «սոցիալական բոլոր մեծ շարժումների հիմք է համարում հավատը», իսկ անհատների դերը տեսնում է նրանում, որ նրանք առաջնորդվում են աստվածային պատվիրաններով: Սակայն վարդապետն արքայության քրիստոնեական ըմբռնումը կապում է ոչ թե «վախճանաբանական ռեալիզմի», այլ վերջինիս հիմնովին հակառակ աշխարհի, արդարության և հավասարության գաղափարների հետ: Ըստ էության աստվածաբանական այդ լուծման մեջ արքայությունը որակվում է «յուրատիպ գաղափար», որի իրագործումը նա որոնում է սոցիալական կարգերի վերափոխման մեջ, այն պարագայում, երբ կրոնը հետամուտ է միայն երկրի վրա վերականգնել հավասարությունն ու արդարությունը:

Հակասական այդ միտումներն էլ իրենցով պայմանավորել են «նոր քրիստոնեական աշխարհայացքի» և «սոցիալան Ավետարանի» մասին վարդապետի ըմբռնումների վերաբերյալ ժամանակի հայկական մամուլում տեղ գտած իրարամերժ տեսակետները, որոնք, ցավոք, մասնագիտական խոր վերլուծության փոխարեն սահմանափակվել են կարճ ու համառոտ բացատրություններով, թեր կամ դեմ դատողություններով:

Ատենախոսության վերջաբանում հայեցակարգային հիմնադրույթների տեսքով ընդհանրացվում են Ե. Տեր-Մինասյանի աստվածաբանական ժառանգության կրոնագիտական վերլուծության հետևյալ արդյունքները.

● Ե.Տեր-Մինասյանը 20-րդ դ. ականավոր հայ գիտնական-հոգևորականներից է, որի կրոնագիտական ժառանգության համակարգված ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի խորն ըմբռնել և ամբողջության մեջ գնահատել այն հոգևոր, հասարակական և պատմական միջավայրը և նախադրյալների համախումբը, որոնք նպաստել են նրա աշխարհայացքի, հետազոտական և մանկավարժական հմտությունների ձևավորմանը:

● Թեև Ե. Տեր-Մինասյանի հոգևոր գործունեությունը տևական չի եղել, այդուհանդերձ իր հոգևոր և աստվածաբանական գործունեությամբ նա մեծապես նպաստել է Հայ եկեղեցու մտավոր կյանքի զարգացմանը, եվրոպացի հայագետների և աստվածաբանների շրջանակներում նրա գիտական հեղինակության բարձրացմանը: Նրա հոգևոր գործունեության ուսումնասիրությունը կարևոր դերակատարություն ունի նաև 19-րդ դարավերջին և 20-րդ դ. առաջին տասնամյակներին Հայ եկեղեցու աստվածաբանական և բորենորոգչական որոնումների, ինչպես նաև այդ գործընթացի հակադիր բևեռները կազմող հոսանքների փոխհարաբերության պատմաքննական հավասարակշռված և անկողմնակալ ուսումնասիրության գործում: Երվանդ վարդապետի հոգևոր ժառանգության ուսումնասիրությունը կոչված է նաև էապես լրացնելու եկեղեցու պատմության կարևորագույն ժամանակներից մեկի վերաբերյալ մինչ օրս պահպանված բացը, ինչպես նաև նորովի արժևորելու այն ջանքերը, որոնք աստվածաբանը ներդրել է հայ հոգևոր ժառանգության համակարգում:

● Անուրանալի է նաև Ե. Տեր-Մինասյանի աստվածաբանական և պատմաբանասիրական ժառանգության դերը հայագիտության զարգացման գործում: Գործնականում նույնը պետք է ասել նաև բազմավաստակ ազգային գիտամանկավարժական մտքի պատմության մեջ գիտնականի ունեցած ներդրման մասին: Ճեմարանում, Հայաստանի համալսարանում, խորհրդահայ միջնակարգ մասնագիտական և բարձրագույն դպրոցներում նրա մանկավարժական գործունեությունն աչքի է ընկել խոր արհեստավարժությամբ, եվրոպական լավագույն համալսարաններին բնորոշ հետևողական գիտամանկավարժական, ուսումնակրթական և ուսումնամեթոդական գործունեությամբ:

● Տեր-Մինասյանի դոկտորական ատենախոսությամբ հայագիտության մեջ դրվել են ասորագիտական ուսումնասիրությունների հիմքերը, իսկ նյութի ընտրությունը պայմանավորված էր Հայ եկեղեցու մասին օտար ուսումնասիրողների թյուր տեսակետները շտկելու և ճշգրտելու միտումով: Ատենախոսության վիճելի հիմնադրույթն այն պնդումն է, թե իբր 6-րդ դ. կեսերից մինչև 8-րդ դ. սկիզբը Հայ եկեղեցին պաշտոնապես հարել է միաբնակության ամենահետևողական թևին՝ հուլիանականությանը:

● Մեծ է հատկապես նրա ներդրումը ապագա հոգևորականների կրթության գործում: Ճեմարանում իր կողմից դասավանդվող կրոնաաստվածաբանական ա-

ռարկաների համար հրատարակած դասագրքերը նրա կողմից պատրաստվել են մեծ նախանձախնդրությամբ և այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը: Իր հեղինակած դասագրքերով Երվանդ վարդապետը նպատակ է հետապնդել ոչ միայն լրացնելու ճեմարանականների կրթության բացերը, այլև այդ ճանապարհով փորձել է բավարարել Հայ եկեղեցու հովվական շահերը՝ կրթված քրիստոնյա հասարակություն ունենալու խնդրին իր ուրույն լուծումն առաջարկելով: Ճիշտ է, նրա հեղինակած դասագրքերում, ինչպես նաև աստվածաբանության, պատմության և բանասիրության առանձին հիմնահարցերին նվիրված հոդվածներում գերիշխում է գերմանական համալսարաններին բնորոշ պատմաքննաբանական մեթոդը, սակայն փաստ է նաև, որ նա կարողացել է մեծ հաջողությամբ այն տեղայնացնել հայագիտության մեջ:

● Վարդապետի հոգևոր-աստվածաբանական գործունեությունը դիտարկելով 20-րդ դարասկզբի Հայ եկեղեցու համապատկերում ակնհայտ է, որ նա իր ուսուցիչների՝ Կարապետ Տեր-Մկրտչյանի և Գարեգին Հովսեփյանի գաղափարակիցն է, ինչպես նաև նրանց կողմից հիմք դրված Հայոց եկեղեցու բարեկարգության շարժման շարունակողը: Սակայն «ազատամիտ» խմբի գործուն անդամներից մեկը լինելով՝ Երվանդ վարդապետը Հայ եկեղեցու շահերին վերաբերող որոշ հարցերում առաջնորդվել է «կուսակցական մտայնությամբ», ինչը կողմնակալ վերաբերմունք է ենթադրել հակադիր «պահպանողական» հոսանքի հանդեպ՝ նրա քայլերի մեջ ձևավորելով ընդդիմություն, հակառակություն և պայքար փնտրելու բարդույթ: Հայ եկեղեցու այդ հոսանքներին բնորոշ գաղափարական տարաձայնությունը հետագայում սերտաճել է անհանդուրժողականության: Հայ եկեղեցու հակասություններն է՛լ ավելի են սրվել եկեղեցու բարեփոխության վերաբերյալ Երվանդ վարդապետի հրատարակած հոդվածներից հետո: Պատճառը եղել է այն, որ վարդապետը ծայրահեղ արմատական տեսակետներ է արտահայտել եկեղեցու բարեկարգության վերաբերյալ, որոնք անընդունելի և վտանգավոր էին Հայ եկեղեցու համար: Եվ ինքնին հասկանալի է, որ նրա հանդեպ ծայր առած քննադատությունը պայմանավորած չի եղել միայն «կուսակցական շահերով»: Ընդդիմությունը պայմանավորված էր զուտ գաղափարական տարաձայնությամբ, որը ծավալվել էր հատկապես երիտասարդ միաբանի և կաթողիկոսական տեղապահ Գևորգ Սուրենյանցի միջև: Վերջինս նույնպես Հայ եկեղեցու շահերով ապրող մեկն էր, սակայն եկեղեցու բարեկարգության նրա տեսլականը հիմնովին տարբերվել է վարդապետի մոտեցումից: Տեր-Մինասյանի տեսակետներից շատերը կրել են լիբերալ-բողոքական աստվածաբանության կնիքը, ուստի ակնհայտ էր, որ դրանք չէին կարող ընդունելի լինել ավանդական եկեղեցու համար: Մինչդեռ Գ. Սուրենյանցի համոզումն այն էր, որ բարեկարգությունը պետք է համահունչ լինի ավանդական դավանանքն:

● Երվանդ վարդապետի առաջադրած բարեկարգության ծրագրի հիմքում ընկած էին քրիստոնեության և մշակույթի երկխոսության, ավանդական դավանանքի փոփոխության և սոցիալական Ավետարանի վարդապետությունները, որոնք հիմնիվեր կազմվել էին իր ուսուցչապետ, լիբերալ-բողոքական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Ա. Հառնակի աստվածաբանության ազդեցությամբ: Դրանով է բացատրելի,

որ Տեր-Մինասյանի տեսակետներում միակողմանի վերաբերմունք է դրսևորել քրիստոնեական հավատի պատմական փորձառության նկատմամբ և եկեղեցու պատմությունից միակողմանի մեկնաբանությամբ վկայակոչել է միայն այն, ինչն օգտակար է եղել իր տեսակետները հիմնավորելու համար: Այդ ամենի արդյունքում նրա կողմից առաջադրված բարեկարգության ծրագիրը վերածվել էր Հին եկեղեցու դեմ ուղղված և «նորը հաստատելու հեղափոխական» կոչի:

● Տեր-Մինասյանի դրույթների վերաբերյալ մամուլում հնչած թե՛ կողմ, և թե՛ դեմ կարծիքները հենված չեն մասնագիտական ծանրակշիռ վերլուծության վրա: Դրանք լոկ պատկերացում են տալիս ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի աստվածաբանական ըմբռնումների մասին:

Ատենախոսության առանցքային գաղափարներն ու հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի եկեղեցագիտական գործունեությունը (1892-1910) և լիբերալ-բողոքական դպրոցի հետ ունեցած առնչությունները *(մենագրություն),* Ս. Էջմիածին, 2012, 320 էջ:
2. Մշակույթի և քրիստոնեության երկխոսությունը Հայոց Եկեղեցու վերանորոգության լույսի ներքո (ըստ Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանի), «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2009, ԺԲ, էջ 23-40:
3. Եկեղեցու դավանանքի բարեփոխության Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանի առաջարկի քննական վերլուծություն, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2010, Ա, էջ 25-37:
4. Երուանդ Տէր-Մինասեանի յուշերը Կոմիտասի մասին, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2015, Զ, էջ 136-144 (համահեղինակ՝ Արարատ քհն. Պողոսյան):

Сароян Арман Володяевич

Религиоведческая концепция архимандрита Ерванда Тер-Минасяна

Заключение

Диссертация посвящена свидетельствам и многочисленным результатам хоть и краткосрочной, но важной деятельности священнослужителя-ученого архимандрита Ерванда Тер-Минасяна в XX веке. Наследие его исключительных знаний в области богословия, вероисповедания и церквоведения позволяет глубже понять и оценить в целом то духовное, социально-историческое состояние и предпосылки, которые способствовали формированию его мировоззрения, исследовательского и педагогического мастерства.

Своей духовно-богословской деятельностью архимандрит Ерванд Тер-Минасян не только способствовал развитию национальной духовной и культурной жизни, но и возвышению авторитета Армянской церкви среди европейских богословов и арменоведов. Многие понятия научного, богословского и церковного наследия до сих пор являются предметом для изучения и исследований в разных областях науки. Изучение духовного служения архимандрита Ерванда Тер-Минасяна имело важную роль в конце XIX и первой половине XX вв. в деле изучения богословия Армянской церкви, также в деле противостояния ложным течениям в этот период. Систематизированные исследования архимандрита Ерванда были призваны для восполнения пробела важнейшего периода истории Армянской церкви, сохранившегося до сегодняшнего дня, а также дать новую оценку тому вкладу, который привнес ученый-богослов в систему армянского духовного наследия.

Невозможно не оценить также значение богословского и историко-культурного наследия архим. Ерванда Тер-Минасяна в деле развития арменоведения. Также необходимо упомянуть и о вкладе ученого в становлении научно-педагогической мысли в истории. В Семинарии, Армянском Университете, в средних и высших школах его многолетний педагогический путь запоминается фундаментальным профессионализмом, который свойственен лучшим европейским Университетам своей последовательной научно-педагогической и образовательно-методической деятельностью. Докторской диссертацией Ерванда Тер-Минасяна закладывается основа исследований сирийской культуры в арменоведении, а выбор материала был согласован на опровержении и исправлении недостоверных позиций и мнений зарубежных исследователей относительно Армянской церкви. Главным вопросом исследования и опровержения в этой работе является тот факт, что Армянская церковь с середины VI до начала VIII вв., по мнению исследователя, официально склонялась в сторону Афтардокетства. В докторской диссертации Ерванда Тер-Минасяна не обосновано также то утверждение, что ищущие армянского исповедального покровительства сирийцы были афтардокетами, исходя только из того, что они предали анафеме Севирия. Армянская церковь не Афтардокетна, а

основывается на решениях первых трех Вселенских Соборов и является последовательницей учения о нетлении, которое нашло свое развитие в трудах Отцов Армянской церкви в VIII в.

Невозможно не отметить его вклад в деле воспитания и образования будущих священнослужителей. Книги и методические материалы, опубликованные для преподавания в Семинарии богословских предметов, которые он сам вел, были приготовлены с большой ревностью и до сих пор не утратили своей важности и ценности. Этими публикациями архим. Ерванд пытался не только восполнить пробелы в образовании семинаристов, но и попытался удовлетворить пастырские интересы Армянской церкви, предлагая его уникальное решение для получения образованного христианского общества. Конечно, в учебных материалах под его авторством, а также богословских, исторических и филологических статьях, посвященных отдельным вопросам, прослеживается свойственный немецким университетам историко-исследовательский метод, хотя очевиден факт, что он сумел удачно использовать этот метод в арменоведении.

Рассматривая духовно-богословскую деятельность архим. Ерванда в начале XX века становится ясно, что он является последователем и приверженцем своих учителей: Карапета Тер-Мкртчяна и архим. Гарегина Овсепяна, а также защитником заложенного ими пути к реформированию Армянской церкви. Однако в некоторых вопросах относительно интересов Армянской церкви он руководствовался «партийной озабоченностью» и показал свою субъективную позицию относительно оппозиционного течения, что сформировало комплекс поиска борьбы в его деятельности. Нашедшее свое место в Армянской церкви это несоответствие в дальнейшем переросло в распри, непринятие другой позиции, взаимных обвинений и осуждений, что мешало концентрации сил вокруг сохранения Церкви и ее деятельности. Несогласия оппозиционных течений еще более обострились относительно преобразования Церкви после публикаций статей архим. Ерванда. Причина в том, что он в этом вопросе высказал радикальные фундаментальные позиции, которые неприемлемы для Армянской церкви. И само собой разумеется, что направленные против него мнения и осуждения были обусловлены идеологическими разногласиями, которые возникли между молодым священнослужителем и заместителем Католикоса архиеп. Геворгом Суренянцем. Архиеп. Геворг Суренянц был также тем человеком, который жил интересами Армянской церкви и следовал другой точке зрения относительно преобразования Церкви. Многие заметили либеральный протестантский богословский след во взглядах архим. Ерванда Тер-Минасяна, вследствие чего его позиция не была признана со стороны официальной Церкви.

В основе программы по преобразованию, предложенной Ервандом Тер-Минасяном, были заложены диалог христианской культуры, изменения традиционного вероисповедания и многие из основ социального Евангелия, которые

были созданы под влиянием богословия его наставника – А. Гарнака. Этим объясняется то, что в предложенных идеях он выказывает одностороннее отношение к историческому опыту христианской веры, и из Церковной истории нам известно, что он изъял только те материалы, которые были ему необходимы для обоснования его позиции и объявлений. В результате всего этого, предложенная им программа по преобразованию была переведена в разряд призыва против ранней Церкви и созданию новой.

Звучащие в современной, на тот момент, прессе положительные и отрицательные отклики относительно богословских, вероисповедальных и преобразовательных предложений архим. Е. Тер-Минасяна были основаны на полноценных профессиональных исследованиях. Они создают представление об армянском общественном мышлении того времени и показывают отсутствие полноценного богословского восприятия взглядов архимандрита.

Saroyan Arman Volodyayi

Yervand Vardapet Ter-Minasyan's Theological Concept

Summary

This dissertation is dedicated to the short-lived, but prolific, academic accomplishments and career of one of the 20th century prominent Armenian scientists and clergyman, Yervand Vardapet Ter-Minassyan and his extensive works in the fields of spirituality and religon. His scholarship and research in religion, theology, and ecclesiology allowed him to develop a deeper understanding and greater appreciation for religious and social-historical academic spheres, which formed his worldview, enhanced his pedogogical expertise, and honed his research skills.

Not only did Yervand Vardapet Ter-Minassyan's spiritual and theological work contribute to the enrichment of Armenian national spiritual and intellecutal life, but also to the rise of the Armenian Church's prestige among European armenologists and theologians. The rich legacy that he left in religious studies, theology, and ecclesiology is still worth examining within various research fields. Yervand Vardapet's research in the field of religion has contributed to the Armenian Church's theology and renewal in the late 19th century and early 20th century. His work served to balance opposing views of critical-historical study.Yervand Vardapet Ter-Minassyan's legacy of systematic research fills the gap of the Armenian Church's most important time period, and also re-establishes the value of the institution's spiritual heritage.

It is undeniable that Yervand Vardapet Ter-Minassyan's theology and historical philology played a role in the enrichment of Armenology. Practically speaking, we must say the same in regards to his contribution to pedological thought, and his role in numerous scientific accomplishments. In the Seminary, in Soviet universities, colleges, and secondary schools, his enduring pedogogical skills were recognized as being similar to the best universities in Europe, which is evident in his pedagogical research and teaching methodologies.

Yervand Ter-Minassyan's doctoral thesis laid the groundwork for research in Syriac studies within Armenology. The subject of his thesis was chosen in order to correct the misunderstandings regarding the Armenian Church as presented by non-Armenian researchers. This analytical work aimed to correct the assertion that between the 6th and 8th centuries the Armenian Church had officially adhered to the teachings of aphthartodocetism (as taught by Julian of Halicarnassus). It is untenable, however, that the Syrians who saught the sponsorship of the Armenian Church, were also adherents of aphthartodocetism merely because they also opposed Severus of Antioch. The Armenian Church is not a follower of aphthartodocetism, but rather an adherent of the decisions of the first three ecumenical councils from which flowed pure doctrine and teaching, attested to by Armenian Church fathers in the 8th century.

His contributions to educating future priests and in pedagogy are undeniable. The textbooks and handbooks he published, for the theological classes he taught, were

written with great zeal; and to this day they have not lost their value. With these publications, Fr. Yervand aimed not only to fill the gaps in the Seminary's curriculim; but also attemtped to benefit the pastoral life of the Armenian Church, in order to meet the need of having an educated Christian society. Surely, in his published textbooks, as well as his articles on theology, history, and philology German historical analysis methodologies dominate. Furthermore, it is evident that he successfully integrated these methodologies into Armenology.

Examining Yervand Vardapet's theological work in the context of the Armenian Church in the beginning of the 20th century, we find he was an apologist for reforms in the Armenian Church, initiateded by his teachers, Karapet Tsairaguin Vardaped Ter-Mkrtchyan and Garegin Vardapet Hovsepyan. However, when it came to certain questions pertaining to the Armenian Church, his "politcal mind" shone forth. Furthermore, he exhibited a bias towards views contrary to his own which created a complex within him compelling him to seek out conflict.

The ideological disagreements in the Armenian Church manifested itself in intolerance. Mutual accusations and criticisims served as an impediment to a unified mission and vision for the Church.Yervand Vardapet's published articles, polarized the opposing viewpoints regarding reforms in the Armenian Church. Yervand Vardapet had expressed a radical viewpoint which was unacceptable for the Church. It is understandable that the criticism and opposition against him were due to idealogical disagreements, which began to develop between this young member of the Brotherhood and Abp. Gevorg Surenyants the *Locum Tenens*. Abp. Gevorg Surenyants was someone who likewise wished the benefit the Armenian Church, but had a different vision for its reforms. Many of Yervand Vardapet's views carried the undeniable mark of liberal Protestant theology, and it was evident that they could not be acceptable for a traditional church.

The root of Yervand Vardapet's proposed plan for reforms were dialectical Christian culture, traditional credal/doctrinal changes and many teachings of a social Gospel, resulting from the theological influence of his mentor A. Harnack, a prominant representative of liberal protestant theology.This explains why his proposals portray a one-sided argument regarding both the historical experience of the Christian faith and church history; thus, enabling him to establish his position. As a result, the plan for proposed reforms turned into an attack on the ancient church, and a call for the establishment of a new, unique, and revolutionary church.

The press at the time, while voiceing their opinion "for" or "against" Yervand Vardapet's proposed theological and historical-dogmatic reform concepts, had no proper analytical framework with which to evaluate his proposals. This gives us a glimpse of the lack of professional preparedness, among the general Armenian public, in comprehending theological issues during that time period.